«Կլոր սեղան» քննարկում երկակի վերահսկողության ընթացակարգում գործողությունների ծրագրի եւ հաշվետվությունների վերաբերյալ

Ստրասբուրգ, 2014 թվականի հոկտեմբերի 13-14

Եզրակացություններ

2014 թվականի հոկտեմբերի 13-14-ը Եվրոպայի Խորհուրդը (Վճիռների կատարման հարցերով վարչություն) Ստրասբուրգում կազմակերպեց Եվրոպական դատարանի վճիռների կատարման համար գործողությունների ծրագրերին եւ հաշվետվություններին նվիրված «կլոր սեղան» քննարկում:

Գործողությունների ծրագրերը/հաշվետվությունները կազմում են 2011 թվականի հունվարին ներդրված նոր երկակի ընթացակարգի հիմքերից մեկը եւ համարվում են սուբսիդիարության սկզբունքի գործնական արտահայտությունը: Այս սկզբունքի համաձայն՝ վճիռների կատարման առաջնային պատասխանատվությունն ընկնում է պետությունների վրա, որոնք, Նախարարների կոմիտեի վերահսկողության ներքո, կարող են ընտրել դրանց իրականացման մեթոդները:

Ավելի քան երեք տարի է, ինչ ներդրվել է նոր վերահսկողության ընթացակարգը: «Կլոր սեղան» քննարկման նպատակն էր քննարկել գործելակերպերը եւ զարգացումները, ինչպես նաեւ գործողությունների ծրագրերի եւ հաշվետվությունների մշակման գործընթացում առաջացած դժվարությունները: Օգտվելով հնարավորությունից նաեւ ուսումնասիրվել է Դատարանի վճիռների կատարման գործընթացի շրջանակում դրանց ամբողջ ներուժը:

Գործողությունների ծրագրերը եւ հաշվետվությունները. կատարման գործընթացում ավելացած արժեքը

Մասնակիցները քննարկման սկզբում նշեցին, որ նոր աշխատանքային մեթոդները ներդնելուց հետո յուրաքանչյուր տարի Կոմիտեն կարողացել է փակել թվով ավելի շատ գործեր նախորդ տարիների համեմատ, իսկ կատարման գործընթացն արագացել է բազմաթիվ նոր գործերի համար:

Մասնակիցները նաեւ ընդգծեցին, որ գործողությունների ծրագրերը եւ հաշվետվությունները մեծապես նպաստել են վճիռների կատարման գործընթացի թափանցիկությանն ու դինամիկային: Այս առումով, նրանք նկատեցին, որ մի շարք երկրներում զգալիորեն մեծացել է իշխանությունների նախաձեռնողականությունը Դատարանի վճիռներով պահանջվող միջոցները սահմանելու եւ կիրարկելու, ինչպես նաեւ Նախարարների կոմիտեի որոշումներին արձագանքելու հարցում:

Որոշ մասնակիցներ կարեւորեցին գործողությունների ծրագրի մշակման գործընթացում բոլոր համապատասխան դերակատարների, այդ թվում՝ ազգային խորհրդարաններին եւ քաղաքացիական հասարակության ներգրավումը:

Ավելին, «կլոր սեղան» քննարկման ընթացքում մասնակիցների կողմից բերված օրինակները ցույց տվեցին գործողությունների ծրագրերի կարեւոր ներուժը արդյունավետ համագործակցության զարգացման գործում, մասնավորապես այն բարդ եւ(կամ) կառուցվածքային խնդիրներին պատասխաններ գտնելու հարցում, որոնց պետություններին կոչ է արվում լուծել:

Մասնակիցները հետաքրքրությամբ նշեցին ազգային մակարդակով կառուցողական բանավեճերի անցկացման օրինակները, որոնց ընթացքում քննարկվում են առանցքային հարցեր եւ թե ինչպես են այս բանավեճերն ազգային մակարդակով միավորում առանցքային դերակատարներին՝ հիմնականում հավանության արժանացած գործողությունների ծրագրի շուրջ:

Մասնակիցները համաձայնեցին, որ դրանք լավ գործելակերպի օրինակներ են, որոնք պետք է լինեն ոգեշնչման օգտական աղբյուր:

Գործողությունների ծրագրերը եւ հաշվետվությունները. բարելավման հնարավորությունները

Որոշ մասնակիցներ նշեցին վաղ փուլում ազդանշաններ ունենալու անհրաժեշտությունն առ այն, որ առաջարկված գործողությունների ծրագիրը արդարացնում է Նախարարների կոմիտեի սպասումները: Մյուս մասնակիցները, ընդգծելով սուբսիդիարության սկզբունքը եւ հենվելով դրա վրա, նշեցին, որ վաղ փուլում երկխոսություն պետք է նախատեսվի միայն հատուկ իրավիճակներում, որոնք կվերաբերեն առավել բարդ խնդիրներին:

Մասնակիցները նաեւ կարեւորեցին, որ անհրաժեշտ է, որպեսզի գործողությունների ծրագրերը եւ հաշվետվությունները լինեն հասկանալի եւ հեշտ ընթեռնելի, մասնավորապես՝ համապատասխան իրավական համակարգից դուրս գտնվող անձանց համար: Արդյունքում կհեշտանա Դատարանի վճիռներով առաջացած խնդիրների հեշտ վերհանումը, ինչպես նաեւ ավելի լավ պատկերացում կարելի է կազմել իշխանությունների կողմից ձեռնարկվելիք կամ նախատեսվելիք միջոցառումների պատեհության, ինչպես նաեւ իշխանությունների՝ կողմնորոշիչ ժամանակացույցով նման միջոցառումներ ընդունել առաջարկելու դրդապատճառների մասին: Այս առումով նշվեց նաեւ, որ ազգային լեզուներով կազմված փաստաթղթերի՝ Եվրոպայի խորհրդի երկու պաշտոնական լեզուներից մեկով որակյալ թարգմանությունը նպաստում է դրանց հստակությանը եւ հեշտ կարդալուն: Ավելին, այս տեղեկությունների մատչելիությունն ապահովելու նպատակով, մասնակիցները նաեւ ընդգծեցին, որ գործողությունների ծրագրերը եւ հաշվետվությունները, ինչպես նաեւ Նախարարների կոմիտեի համապատասխան որոշումները պետք է տարածվեն երկրի ազգային լեզվով: Մասնակիցները որպես ոգեշնչման աղբյուր ողջունեցին այն ազգային նախաձեռնությունները, որոնց նպատակն է հրապարակել գործողությունների ծրագրերը եւ հաշվետվություններն ազգային լեզուներով՝ դյուրամատչելի կայքերում՝ ներառյալ մասնավորապես վճիռների կատարման միջոցառումներով անմիջապես զբաղվող մարմնի կայքում:

Ուշադրություն է դարձվել նաեւ գործողությունների ծրագրի/ հաշվետվությունների մանրամասն եւ արդյունավետ մշակման, այդ թվում

համապատասխան գերատեսչության կողմից փաստաթղթերի մշակման համար ձեւանմուշների պատրաստման, այդ փաստաթղթերի մշակման համար հատուկ կառուցվածքի սահմանման եւ համակարգողների ներգրավման ապահովմանն ուղղված միջոցներին:

Միեւնույն համատեքստում ուշադրության կենտրոնում է եղել այդ գործողությունների ծրագրերի եւ հաշվետվությունների մշակման գործընթացում ներգրավվածների համար Եվրոպական դատարանի իրավունքի եւ վճիռների կատարման պահանջների վերաբերյալ պարբերական բնույթ կրող վերապատրաստման անցկացման կարեւորության հարցը:

Որոշ մասնակիցներ նշեցին նախնական ժամանակացույցի տրամադրման հետ կապված դժվարությունների մասին, հատկապես, երբ պահանջվում է օրենսդրական ակտերի ընդունում: Այնուամենայնիվ նշվեց նաեւ, որ այդ ժամանակացույցները, եթե անգամ դրանք շատ մոտավոր են եւ ենթակա են փոփոխության, հեշտացնում են վճիռների կատարման գործընթացը թե՛ ազգային եւ թե՛ եվրոպական մակարդակով: Ամեն դեպքում, մասնագետների կարծիքով կարեւոր է գործողությունների ծրագրերը պարբերաբար թարմացնելու եղանակով ապահովել գերատեսչությունների կողմից ձեռնարկվող գործողությունների անհրաժեշտ թափանցիկությունը՝ խուսափելու համար այն իրավիճակից, երբ տեղեկատվության բացակայությունն անհարկի հարցերի տեղիք է տալիս:

Մասնակիցները համաձայնեցին, որ որակը եւ ակներեւությունը թե՛ ազգային եւ թե՛ եվրոպական մակարդակով կարող է ավելի բարելավվել: Այս առումով շատ մասնակիցներ իրենց ուշադրությունը սեւեռեցին պետությունների կողմից ազգային մակարդակով բավականաչափ ռեսուրսներ տրամադրելու (ընդարձակ իմաստով) անհրաժեշտության վրա, որը պետք է իրականացվի համապատասխան գերատեսչական մակարդակով: Այդ ռեսուրսները կապահովեն վճիռների կատարման գործընթացում բոլոր դերակատարում ունեցողների իրական հնարավորությունների մոբիլիզացումը, դրանց արդյունավետ համակարգումը եւ անհրաժեշտ գործողությունների ծրագրերի/հաշվետվությունների ժամանակին մշակումը, որոնք կլինեն հստակ, չափավոր, համոզիչ եւ առաջադիմական, եթե դա պահանջվում է

հանգամանքների բերումով: Վճիռների կատարման առաջնային պատասխանատվությունը կրում են վճռի կատարման իրավասություն ունենալու դեպքում:

Ի վերջո, շեշտվեց այն հանգամանքը, որ գործողությունների ծրագրի վրա կարող է նաեւ արդյունավետորեն անդրադառնալ այն, ինչն արդեն արվել է ազգային մակարդակով դերակատարում ունեցողների կողմից այլ մարմիններին /միջազգային կազմակերպություններին, ինչպիսին է, օրինակ, Միավորված ազգերի կազմակերպությունը, վերաբերող միեւնույն հարցերի առնչությամբ. կրկին հեծանիվ հայտնագործելու փոխարեն անհրաժեշտ է փոխգործակցություն ստեղծել:

Մասնակիցները մեծ հետաքրքրություն դրսեւորեցին Վճիռների կատարման վարչության՝ գործողությունների ծրագրերի /հաշվետվությունների մշակման մասին ձեռնարկ պատրաստելու նախաձեռնության նկատմամբ: Նրանց կարծիքով օգտակար կլիներ արդիականացնել Դատարանի վճիռների անհապաղ իրականացման ներքին մեխանիզմների մշակումը, որը կատարվել է Տիրանայում (դեկտեմբերի 15-16) կայացած «կլոր սեղան» քննարկումների շրջանակներում:

Գործողությունների ծրագրեր եւ հաշվետվություններ՝ ապագայի հեռանկարներ

Հաշվի առելով վճիռների կատարմանն առնչվող հարցերի վերաբերյալ Դատարանի կողմից դրսեւորվող աճող հետաքրքրությանը՝ գործողությունների ծրագրերը եւ դրանց իրականացումը, ինչպես նաեւ գործողությունների մասին հաշվետվությունները կարող են տեղեկատվության կարեւոր աղբյուր լինել Դատարանի համար եւ նույնիսկ շարժիչ ուժ հանդիսանան վերջինիս հետ առավել սերտ փոխգործողության համար:

Քննարկումները նաեւ վերաբերում էին գործողությունների ծրագրերի մշակման եւ վերահսկման գործում ազգային խորհրդարանների առավել մեծ ներգրավվածությանը՝ անկախ Կառավարության կողմից ազգային խորհրդարաններին ներկայացվող տարեկան հաշվետվություններից, որն արդեն կիրառվող պրակտիկա է մի շարք պետություններում:

Մասնակիցները նաեւ հետաքրքրությամբ նշեցին համագործակցության ծրագրերի եւ վճիռների կատարման միջեւ գոյություն ունեցող եւ հնարավոր կարեւոր փոխգործողության մասին: Նրանք ընդգծեցին այն կարեւոր դերը, որ հստակ եւ համոզիչ ձեւակերպված գործողությունների ծրագիրը կարող է ունենալ այս համատեքստում, գործողությունների ծրագրի մշակման փուլում գերատեսչությունների կողմից սահմանված միջոցները, նույնիսկ բարդ խնդիրների առկայության դեպքում, կատարելագործելու առումով, քանի որ համագործակցության ծրագրերը գերատեսչություններին փորձառություն եւ մի շարք ցուցումներ են ապահովում, որոնք թույլ կտան նրանց առավել լավ կիրառել միջոցների ընտրության հարցում նրանց ունեցած հայեցողական լիազորությունների շրջանակը:

Ի վերջո, «կլոր սեղան» հանդիպման ժամանակ կարեւորվեց Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների անհապաղ կատարման ներքին արդյունավետ հնարավորությունների մասին անդամ պետություններին ուղղված Նախարարների կոմիտեի CM/Rec(2008)2 հանձնարարականի իրականացումը եւ նույնիսկ դրա կատարելագործումը, ինչպես նաեւ այն, որ հատուկ ուշադրություն պետք է դարձվի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման բարելավման վերաբերյալ հետագայում դիտողություններ կատարելիս: